Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 298 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ »

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության անտառների ենթաոլորտի շնորհիվ ածխաթթու գազի կլանումն ավելացնել յոթ տոկոսով՝ կայուն, կլիմայի հանդեպ հարմարվողական անտառային տնտեսության մեջ ներդրումների հաշվին և համայնքների արդյունավետ մասնակցությամբ վառելանյութի էներգաարդյունավետության բարձրացման շնորհիվ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Միավորված ազգերի կազմակերպության պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն
4.	Ծրագիրը կատարողը	Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ, քաղ. Երևան, Արմենակյան 129, ՀՎՀՀ՝ 01573524
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Սյունիքի մարզ, Լոռու մարզ, Կոտայքի մարզ, շրջակա միջավայրի պահպանություն
6.	Ծրագրի բյուջեն	2 194 248.96 հազար դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Հայաստանի Հանրապետություն
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի ապրիլի 11-ից մինչև 2029 թվականի նոյեմբերի 3-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և Միավորված ազգերի կազմակերպության պարենի և գյուղատնտեսության կազմակերպության միջև 04.01.2022 թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2022 թվականի ծրագիր՝ 2022 թվականի ապրիլի 11-ից մինչև 2029 թվականի նոյեմբերի 3-ը - 2 194 248.96 հազար դրամ, այդ թվում՝

		1) ծառայությունների ձեռքբերում - 42456.0 հազար դրամ. 2) աշխատանքների ձեռքբերում - 1421193.12 հազար դրամ. 3) ապրանքների ձեռքբերում (կամ ներմուծում) –580202.4 հազար դրամ. 4) վարչական սարքավորումների և գրենական պիտույքների ձեռքբերում (կամ ներմուծում)-17341.44 հազար դրամ. 5) այլ ծախսեր - 36 000.0 հազար դրամ. 6) կոմունալ ծառայություններ - 18000.0 հազար դրամ. 7) աշխատողների վարձատրություն - 79056.0 հազար դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) Ծառայությունների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի ազատում) – 42456.0 հազար դրամ, այդ թվում՝ ա. սեմինարի կազմակերպման ծառայություններ (2022-2029 թթ.) – 26616.0 հազար դրամ, բ. տպագրության, թարգմանության, հրապարակման ծառայություններ (2023-2024/ 2028-2029 թթ.) – 15840.0 հազար դրամ. 2) աշխատանքների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի ազատում) – 1421193.12 հազար դրամ, այդ թվում՝ ա. ջերմատների կառուցում՝ ներառյալ ոռոգման համակարգը (2022 թ.) - 86400.0 հազար դրամ, բ. նախատնկման և նախապատրաստման աշխատանքներ (2022-2028 թթ.) -108120.96 հազար դրամ, գ. տնկման, վերատնկման, խոտհանման աշխատանքներ (2023-2029 թթ.) - 973097.28 հազար դրամ, դ. ցանկապատերի կառուցման և սպասարկման աշխատանքներ (2023-2029 թթ.) - 253574.88 հազար դրամ. 3) ապրանքների ձեռքբերում (կամ ներմուծում) – 580202.4 հազար դրամ, այդ թվում՝ ա. տնկարանների համար նախատեսված բեռնարկղեր (15000 հատ) (2022 թվական) - 49370.4 հազար դրամ, բ. տնկարանների համար նախատեսված օղակաձև բեռնարկղեր (900 հատ) (2022 թվական) - 45360.0 հազար դրամ, գ. տնկարանների համար նախատեսված սառնարան (2022 թվական)- - 1440.0 հազար դրամ, դ. հորատող սարք (104 հատ) (2023 թ.)- 49920.0 հազար դրամ, ե. ծառատնկման համար այլ պարագաներ (2023 թ) - 25488.0 հազար դրամ,

		զ. ցանկապատման համար անհրաժեշտ պարագաներ (2023-2027 թթ.) - 174240.00 հազար դրամ, է. վերականգնվող էներգիայի ջեռուցման սարքեր (1670 հատ), (2027 թ.) - 232464.0 հազար դրամ, ը.դյուրակիր համակարգիչ (2 հատ), (2024 թ.) - 1920.0 հազար դրամ. 4) վարչական սարքավորումների և գրենական պիտույքների ձեռքբերում (կամ ներմուծում), (2022-2029 թթ.) -17341.44 հազար դրամ. 5) այլ ծախսեր (2022-2029 թթ.) -36 000.0 հազար դրամ. 6) կոմունալ ծառայություններ (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի ազատում) (2022-2029 թթ.) - 18000.0 հազար դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	1) Կազմակերպչական ծախսեր -114397.44 հազար դրամ. ա. ծրագիրն իրականացնող աշխատողների վարձատրություն-79056.0 հազար դրամ, բ. վարչական սարքավորումների և գրենական պիտույքների ձեռքբերում-17341.44 հազար դրամ, գ. կոմունալ ծառայություններ-18000.0 հազար դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16–ի N 66 - Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25–րդ կետով սահմանված կարգով լիազոր մարմնին և ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

05.05.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ